

ՄՈՐԿԻ ՍՈՒՐԲԸ^{*)}

XVIII

Կատաղի փոթորիկը ոռնում էր. շղթայագերծ եղած հողմերը ահաւոր մումոսով լցրել էին ողջ բնութիւնը. Մութ երկնքում կայծակը ճայթում էր անընդհատ. նրա վայրկենական փայլի տակ լեռներն ու դաշտերն ասես սարսում, դողում էին երկնքի բոցերի հետ և կրկին ծածկում թանձր խաւարի մէջ։ Սև ամպերն իրար յետեկից ճարճատում ու որոտում էին լճի վրայ, թւում էր, թէ Սինակայ լեռները մրրկով տեղահան եղած՝ տարւում են երկնքի երեսից, զարկուում են իրար, և շուտով վար կը թափուեն՝ իրանց հսկայական զանգուածի տակ կեանք և կենդանութիւն ճիլելու, ոչնչացնելու համար։ Լիճը ալեկոծ ու որոտալի, թափ առած՝ փախչում էր իր ափերից, ուր էլ հանգիստ չ'օւնէր, և ալիքներն իրար անողորմաբար տրորող, կոխկոտող գաղանների պէս ձգւում էին հեռու, հեռու, զարկուում էին ժայռերին ողը ու հեծեծանքով, կամ իրարից կախկխուած՝ կարծես փորձում էին լեռն ի վեր բարձրանալ, ապա յետ էին ընկնում խացուցիչ աղմուկով, եռում, փրփռում, կըրծոտում իրար։ Հողմածեծ անձրել թափում էր անընդհատ, մթութեան մէջ լսում էր ջրային յորդ կաթիլ-

^{*)} ՏԵ՛ «Մուլճ» № 5.

ների շրփոցը, որ խառնւում էր քամիների մռմռոցի, ալիքների գոռոցի, ամպերի օրոտի հետ՝ կաղմելով բնութեան կրծքից դուրս պոռթկացող մի անհասկանալի, մի խեղդող մռնչիւն։ Կղզու սև զանգուածի տեղ կայծակի փայլը երբեմն-երբեմն ցոյց էր տալիս միայն փրփուրի մի ահագին գէղ այնտեղ ալիքների կուիւն աւելի կատաղի էր, կարծես նրանք դժգոհ էին, որ իրանց անօրինակ տագնապին ու ցաւին վկայ է այդ փոքրիկ ցամաքը, և աշխատում էին քանդել, թաղել նրան իրանց անդունդ-ներում։ Բնութիւնը հեծում էր երկունքով բռնուած, և երկինքը ժամառժամ իջնում, կախւում էր երկրի վրայ իր բոլոր ծանրութեամբ։

Այս բոլորը սակայն այն մենաւոր մարդը կարծես չէր զգում, չէր տեսնում, մի անօրինակ, սև զանգուած թիկունքին, մեծ դժուարութեամբ, սայթափելով, տնքալով, մռմռալով՝ նա քայլում էր լճի ափի նեղ արահետով։ Երբ ալիքներն իրար հրհրելով սղմում էին գէպի ափը, իրանց ցնցուզներով ծածկում մենակ ուղերին՝ ասես ներս քաշելու համար, նա կանդ էր առենում մի վայրկեան, ապա ջրերից ազատուած՝ քայլում էր կրկին միւնոյն ճանապարհով, միւնոյն բեռը մէջքին։ Քամին նեզում էր, անձրևը ծեծում, բայց նա խարխափելով, օրօրուելով քայլում էր հա քայլում։

—Ահա, զուլում գիշեր է, զուլում, մռմռում էր նա՝ թիկունքի բեռը վար ձգելով։

Հեռու հարթափայրի վրայ թանձր խաւարի միջից մի նուալ, դունատ լոյս էր փայլվլում։ մարդը միայն այն կողմն էր նայում, դէպի այն սղպլան ճրագն էր գնում։ Այնտեղ է Գսպէի ջրաղացը, այդ նրա ջրաղացի լոյսն էր, կենդանութեան միակ նշանը համատարած սարսափի ու մթութեան մէջ։

Գսպէն կոյս-Գուլէին ճանապարհ գնելուց յետոյ արեմուտքի շարագուշակ ամպին մէկ էլ նայեց, դան-դաղութեամբ անցաւ ջրաղացի յետեղ, բարձրացաւ ամբարդակի վրայ, ուշադրութեամբ գիտեց նաւը, առաջը

հաւաքուած ճիւղերն ու տերեները յետ քաշեց, ապա գնաց մինչև սաւաղը, մի փոքր լայնացրեց ու յետ եկաւ, ներս մտաւ ջրաղաց, դուռը կողպեց։ Արդէն մովթ էր, ճրագը վառեց, նսանց իր անկիւնում ու սկսեց ընթը-րիքը։ Ենք ատամներով մերթ ծամում էր, մերթ բերա-նարաց, անշարժ ականջ էր դնում դրախ ձայներին։ Բուն լուել էր այն երեկոյ, բայց նրա փոխարէն քամին զգվզում էր ջրաղացի պատերի բացուածքներից, ուռի-ները հեծեծում էին, իսկ ջրտունի տակ վառի աղմուկն աւելի խլացուցիչ էր դառնում։

Դարձեալ մի չար, մի վատ գիշեր էր. ծերունին հաւաքեց իր հացը, հին թաշկինտկի մէջ կապեց և դրեց դարակում, ուտել չէր լինում. իր սովորականի համեմատ աչքը քարին ու չախչակին յառած՝ լուռ մտածում էր։ Գուլէի տիսուր, հոյակապ պատկերը, երեկոյեան լրսե-րի մէջ լողացող այն հրաշալի գէմքը, նրա ձեռքի հան-դիսաւոր շարժումը գեռ Գուլէի աչքի առաջն էր։

«Նա կը գայ. նա կը գայ... այն Մրրկի սուրբը»... գեռ հնչում էին Գուլէի ականջում։ «Հա, հա, մտա-ծում էր ծերունին, նա կը գայ, ես էլ եմ հաւատում, բոլոր միրիկների ժամանակ ամպերը նրա ոտների տա-կից չքանում են, և քամիները լրում. բայց թող նա գայ այն միւս մրրկի համար, այն, որից հայքիստու-նեան դողում է օր ցերեկով, պարզ ու պայծառ եր-կընքի տակ, անմեղ, անարդար տեղը»։

«Նա կը գայ... նա կը գայ»...

Եւ կատաղի փոթորիկը մոնչում էր դրսում, և ու-ոիները հեծեծում էին ու լալիս, և խաւարը թանձրա-նում էր, շրջակայքը խեղդում, մեռնում էր, մէկ Գուլէն էր կենդանի, մէկ նրա ճրագն էր դեռ պլազում համա-տարած, հոգեհան մթութեան մէջ։

«Նա կը գայ... նա կը գայ»...

Թրրը՛խկ, թրրը՛խկ։

Գուլէն նստած տեղում ցնցուեց. ջրաղացի դուռն էր։ Թրրը՛խկ, թրրը՛խկ.—ծերունին գունատուեց ու ստքի

թռաւ, բայց մնաց իր տեղում կանդնած՝ ինչ անելը
չիմանալով, բայց գուցէ քամին էր, գուցէ...

Թրը՛խկ, թրը՛խկ, այս անդամ աւելի թափով, աւելի
երկար կասկած չը կար, քամին լինել չէր կարող: Գու-
ցէ մի ուշացած ճամբորդ, փոթորկի տակ մնացած մի
թշուառ, չէ որ այդ շատ է պատահել, ինչ կայ անօ-
րինակ, ինչ կայ վախենալու: Գուպէն կամացուկ մօտե-
ցաւ դրանը և կանդ առաւ՝ շունչը բռնած:

—Ո՞վ է:

—Զուլումն է, զուլումը, Գուպէ ամի. բաց գուռը:

—Ապրօ:

—Բաց, բաց, սաղ աշխարհը քանդուել, վազում է
դէպի դերեղմանատուն, փոս են փնտրում ծածկուելու
համար:

Դուռը բացուեց. Ապրօն ներս ընկատ հեալով, տըն-
քալով, քրտինքի մէջ կորած և ձգեց յատակի վրայ մի
դիակ, մի կիսամեռ մարդ: Գուպէն յետ փախաւ սար-
սափած:

—Տոնդ քանդուի՛, Ապրօ, էս ինչ է, ով է:

—Մի փախիր, Գուպէ ամի, ոտի վրայ շրջող մեռել-
ներից մէկն է սա, որ այժմ ընկած է հոգեարք, մինչեւ
այստեղ ջուր էր, շարունակեց Ապրօն ցոյց տարով իր
կոկորդը, դարձել էր տիկ, թափ եմ տուել, էլ ջուր չը
կայ մէջը, բայց հալը հալ չի. արադ ունիս, փէտացել է,
տես, շնուր արա, ծերոց գաւազան կ'ունենաս գու, Գըս-
պէ ամի:

—Կայ, կայ:

Գուպէն քանդեց անկիւնները, մի փոքրիկ շիշ դուրս
քաշեց սպիտակ հեղուկով, ճրագն առաւ, մօտ եկաւ, նայեց:

—Տօ, էս նաւօն է, տնաքանդ, ինչի չես ասում:

—Սնւս, սնւս, ժամանակը չի խօսելու, շորերը
քանդի:

Երկսով արագ-արագ քանդեցին նաւօի թաց շո-
րերը, դուրս քաշեցին վրայից և սկսեցին մարմինը շփել
օղիսվ:

— Ապրօ, ախպէր, ախը դու էլ ես թրջուած, դու զում ես:

— Սուս, սնւս, ժամանակը չի, շփիր, զուլումը որ եկաւ, մենակ չի գայ, ընկերով կը դայ. չար գիշեր է, դեռ էր, թէ աղջիկ, ես ինչ գիտեմ, վազում էր, աներեսոյթ եղաւ, գուցէ իր գերեզմանը դաշւ, իսկ ես նրա յետեկից դնացի, սրան դապայ, լիճը կուշտ էր երկի, նաւակը կուլ տուեց, բայց սրան փսխեց, նաւոն մարսուող պառուղ չի, այդ նա լաւ գիտէր: Ո՞վ գիշտէ, դեռ ինչ է լինելու:

Գոպէն շփում էր և շատ բան չը հասկացաւ Ապրօի տարօրինակ պատմութիւնից, բացի այն, որ նաւօի նաւակը խորտակուել է, բայց նա ազատուել է:

— Գոպէ ամի, զուլում գիշեր է, մեռելների ու դեերի գիշեր, սուրբն էլ է փախել:

— Ի՞նչ ես ասում, Ապրօ, Աստծու դէմ ես խօսում:

— Տնաշէն, չար գիշերին Աստծուած իր սիրածին դուրս չի թողնի, սուրբը խօմ նրա սիրելին է: Երկնքից ադամորդու գլխին կրակ է մաղում, բաց աչք չը կայ դրսում: Ապրօն, դէ, Ապրօի բանն ուրիշ է, նա անիծուած է ծննդի օրից, երկինքն է անիծել նրան դեռ մօր արդանդի մէջ. որտեղ զուլում է, Ապրօն այնտեղ է, որտեղ խաւար է, նա մէջն է, որտեղ բեռ կայ, նրա մէջքին է, որտեղ ցաւ կայ, նա իր բաժինն ունի: Քամիներն ինչ քան են ծեծել ողորմելի գլխիս, ես ու մրրիկը եղբայր ենք և գերեզմանների լեզուն գիտենք: Տես, այս գիշեր իմ անիծուած գլուխը փոթորկի, քամու, անձրեի տակն էր: Կենդանի մեռելները կծկուած են իրանց բներում, այս մէկն էր շակել, դուրսը մնացել, այն էլ բերեցի: Ամպերը սարսափելի են, իջան, իջան, խեղդում են երկերը, սուրբը փախել է, Մըրկի, սուրբը զօրաւոր սուրբը, կենդանի մեռելների բարեկամը... փախել է:

— Նա կը դայ... նա կը դայ...

— Շփիր, շփիր, տես, սա էլ էր ասում՝ «նա կը դայ»... բայց նա չ'եկաւ, ես եկայ, այս ողորմելու սուրբը հիմայ

Ես ու դու ենք, թէ փրկութիւն ունի, մեր ձեռքին է, մեր զօրութեան մէջն է, շփենք, շփենք, Գսպէ ամի, այսօր ես ու դու զօրաւոր սուրբ ենք, շատ զօրաւոր, թնդ գարթնի, սա էլ կ'ասի:

—Մեղայ Քեզ, Աստուած, մեղայ Քեզ:

Նրանք խօսում էին և արորում Նաւօի սառած մարմինը. ձկնորսը կամաց-կամաց ուշքի էր գալիս. նրա չնշառութիւնը հետղհետէ զօրանում էր, անդամները ցնցւում, իրար գալիս, գունատ դէմքը կարմրում, և փակուած աչքերը բացւում, խիւում էին:

—Նաւօ, այ Նաւօ, կանչում էր Ապրօն:

Նա աչքերը բացեց, նայեց մի վայրկեան առանց բան հասկանալու, ապա կրկին ծածկեց. թմրութեան նման մի քուն էր, որի մէջ ընկաւ նրա թուլացած, ուժասպառ մարմինը: Գսպէն ծածկեց նրան իր լայն մազէ աբայով, յետոյ տարաւ, չորացրեց չորերը թոնրի վրայ: Քիչ յետոյ ձկնորսը շորերը հագած՝ նստած էր, ապուշապուշ նայում էր չորս կողմը և կարծես ոչինչ չէր հասկանում: Գսպէն ու Ապրօն նրա առաջը կանգնած՝ նստում էին:

—Ես որտեղ եմ:

—Գսպէի ջրաղացում, ախպէր Նաւօ, պատասխանեց Ապրօն:

—Երազ է:

—Զէ, զուլում էր, անցաւ, բան ուտել կ'ուզես:

—Ո՞վ բերեց ինձ այստեղ:

—Մրրկի սուրբը, իջաւ, վերցրեց ու բերեց:

—Նաւօ ուր է. նա կամաց-կամաց յիշում էր իր հետ պատահածը:

—Սուրբը տարաւ:

—Ապրօն:

—Հա, ես եմ, հանգիստ կաց, պառկիր, ախպէր Նաւօ:

—Ո՞վ է նա, միւսը:

—Զես ճանաչում, Գսպէն է, նրա ջրաղացն է այս:

— Գոպէն, Գոպէն:

— Հա, ես եմ, ախպէլ նաւօ:

— Ելի պատահեցինք, էլի, էլի: իրերը պարզուեցին նաւօի համար, նա այժմ լաւ հասկանում էր բոլորն, ինչ կատարուել է, հասկանում էր, որ Ապրօն է բերել իրան այստեղ ուշաթափ: Եւ նա գժգոհ էր, որ գըտնում է իր սխերիմ թշնամու, հին օրերի թշնամու բը նակարանում: Խստասիրտ, քինախնդիր ձկնորսը կամաց կամաց զարթնում էր: Նա դեռ երբէք այս ջրաղացը ոտք կոխած չէր, ուխտել էր երբէք ոտք չը կոխել, յանաւանդ որ վերջին ժամանակները նա իմացել էր, թէ Ասօն միշտ Գոպէի ջրաղացումն է, նրանք միշտ միշտին են, գիշեր թէ ցերեկ: Նա հաւատացած էր, որ իր աղջրկայ գժբաղդութեան մէջ էլ Գոպէն մաս ունի, որ Ասօն նրան է լսում: Թէ ինչ պիտի ասած լինէր Գոպէն, և Ասօն ինչու պէտք է նրա խորհրդին հետևէր, այդ չէր քննում նաւօն: Նա գիտէր միայն, որ այդ ատելի շէնքի մէջ, այս անիծուած ջրաղացում նրանք միշտ միշտին են. այսքանը բոլորովին բաւական էր, որ երկը սովէլ էլ իր համար թշնամի գառնան, և այս ջրաղացը՝ գժբաղդութեան բուն:

— Ապրօ, լաւ չարիր, լաւ չարիր, կրկնեց նաւօն, գլուխը քաշ ձգեց կրծքին և մնաց մտախոհ:

Լուսաբաց էր, և փոթորիկը գաղարում էր: Լուսոյ ցնցուղները փայլեցին արևելքում. ամպերը պատառ պատառ ցրիւ եկան երկնքում, ջրաղացի յետեւում ուռիների վրայ թռչունների առաջին ձայները լսուեցին: Նաւօն դեռ շարունակում էր գլուխը քաշ մնալ, լուռ, անշարժ: Նա ոչինչ չէր ասում, բայց երեսում էր, ծանր մտքերով էր պաշարուած: Իր սարսափելի արկածի մանը բամասնութիւններից մէկը, ամենից անհասկանալին, ամենից խորհրդաւորը նրան սաստիկ զբաղեցնում էր, և նա ամեն բան մոռացած, անդամ Գոպէի և Ապրօի ներկայութիւնը, աշխատում էր ճշտութեամբ մտարերել աշխիքների մէջ իր մղած անօրինակ պայքարը այն զարմա-

նալի էակի հետո Ո՞վ էր, ի՞նչ էր այն։ Փոթորիկ էր, նա մենակ ջրերի վրայ, առագաստը պատառ-պատառ ընկաւ, ղեկը կորաւ, նա տարւում էր դէպի հաստատ մահ, դէպի ջրվէժը, որի բերանը գաղանի երախի պէս բացուած՝ քաշում էր նրան ալիքների հետ։ Նա դիմա-դըրել իհարկէ՝ չէր կարող, երկնքի ու ջրերի մէջ նա մենակ էր կախուած, եթէ չը նետուէր ալիքների մէջ, նաւի հետ կը կորչէր ջրվէժի տակ։ Նա յիշում էր, թէ ինչպէս սկզբում մօտեցաւ ափին, ինչպէս յետոյ արև-մըտեան հողմը նրան յետ մղեց և քշեց դէպի լճի խոր-քը, ապա դէպի հակառակ ծայրը, ինչպէս նա փորձեց թիավարելով ազատուել առագաստի ընկնելուց յետոյ, ինչպէս ապա ջրի մէջ նետուեց։ Այս բոլորը նա լաւ յի-շում էր, այս բոլորը հասկանալի, բնական էին փոթորկի ժամանակ։ Բայց այն, ինչ նա գտաւ ալիքների մէջ, որ փաթաթւում էր, բռնում էր նրան, ող էր, ի՞նչ էր, մարդ, թէ մի հրէշ, ջրային կենդանի, թէ մի ոգի։ Ահա այս էր, որ նա նոյնպէս մտաբերում էր, բայց հասկա-նալ չէր կարողանում։ Այդ պայքարից զգացած սարսա-փլն այնքան մեծ էր, որ այժմ երբ կամաց-կամաց ուշ-քի էր գալիս, նա նորից վախենում էր, նորից սարս-ռում ու կծկում։ Եւ քանի մտածում էր այդ մասին, դէպքի միւս մանրամասնութիւնները մաշում, չքանում էին նրա գլխից, մնում էր միայն ինքը՝ նաւօն այն հը-րէշի հետ՝ իրար խեղդուելիս քրփած ալիքների մէջ և կրկին մոռանում էր իր ուր լինելը, ինչ լինելը։

Դսպէն ջրաղացի դուռը բացեց. անձրեկից թար-մացած դաշտային սառն օդը լայն հոսանքներով ներս թափանցեց, ջրաղացի փոշոտ մթնոլորտը փոխուեց. նա-ւօն ցնցուեց և գլուխը բարձրացրեց։

—Ապրօ, գիշերը դու ի՞նչու էիր այնտեղ։

—Ես ի՞նչ գիտեմ... ես երբէք չեմ իմանում, թէ ին-չու որևէ տեղ եմ լինում. այնպէս պատահում է. շատ անգամ չեմ ուզում, բայց գնում եմ. դէ, այդպէս է, ախպէր, մարդու կեանքը անհասկանալի դէպքերի շարք

Է. ինքդ էլ՝ իհարկէ՝ չէիր ուզի այժմ այստեղ լինել, այլ քո տանը, բայց տես, նստած ես Գապէի ջրաղացում։

Նաւօն յոյս ունէր մի բան հասկանալ Ապրօի պատասխանից, լուսոյ մի շող ձգել իր հոգին տանջող այն մութ առեղծուածի վրայ, բայց այդ տարօրինակ մարդը երբէք որոշ պատասխան չէր տալիս, նրա հետ խօսելիս՝ ամենքը գլուխները կորցնում էին Յուսահատուած լոեց, գլուխը կրկին քաշ ձգեց, այժմ նրա մըտքերն այլ կերպարանք ընդունեցին. նա յիշեց կնոջը, յիշեց Շողերին, ամբողջ գիշերն անշուշտ նրան սպասել են, սարսափելի՛ գիշեր և՛ նրանց համար, կինն այնքան էլ նրա փոյթը չէր, նա երբէք քնքոյշ չէր եղել դէպի իր ամուսինը, բայց աղջիկը, այն դժբաղդ, յուսահատաղջիկը, «փեղճ Շողեր,» մըմնջաց նա, «փեղճ Շողեր»։

—Գիւղից բազմութիւն է գալիս, ասաց Գապէն՝ ներս գալով, շատ են։

—Քո հաւարին են գալիս, ախպէր՝ նաւօն, գնում են գիւակդ փնտրելու, բայց լուացողի պէտք չի լինի, հըը... թէ թաղելու լինինք, լաւ լուացուած ես։

Արդարեւ գիւղը քանդուած՝ գալիս էր, համոզուած էին, որ ձկնորսը խեղդուել է. գնում էին դէպի լիճը՝ ափերի վրայ գիւակը փնտրելու. բայց այդ չէր բոլոր, Շողերն էլ չը կար նախընթաց երեկոյից։

Բազմութեան առջեից համարեա վազում էր Գիւլնազը, գլխակապը քանդուած, շորերը թաց, տանջուած դէմքը գունատ, ծնկներին խփելով, գլխին տալով, որպէս մի գիւահար, որ փախչում է դաշտերում առանց նպատակի. Ողջ գիշերը նա այդպէս թափառել էր գիւղի փողոցներում, անձրեկի, քամու առաջ, ողջ գիշերը յուսահատ կանչել էր ամուսնուն և միակ զաւակին. Այժմ նրան հետեւում էին հարեանները։

—Վերկաց, նաւօն, էլ նազ մի արա, խեղճ է կնիկդ, տես, ի՞նչ հալի է, ցեխերի միջից գլխին տալով գալիս է, վերկաց, գնւրս արի, թող սիրտը հանգստանայ։ Եւ նա բռնեց նաւօի երկու թեերի տակից, վեր բարձը-

բացրեց, նրանք կամացուկ դուրս եկան ջրաղացի դուռը։
—Նաւօն, Նաւօն, ճշաց բազմութիւնը միաձայն՝
տեսնելով ձկնորսին։ Եւ ամենքը հաւատացին, որ նա փո-
թորկից խոյս տուել, ստիպուած ջրաղացումն է անցկացը-
րել դիշերը։ Ամուսնուն տեսնելով Գիւնազը կարծես
մի քիչ ոյժ առաւ, նա այժմ գոնէ մենակ չէր, անտեր
չէր, աւելի թափով առաջացաւ, հեկեկալով կախուեց
նաւօի ուսերից։

—Մարդ, տունդ աւերուի, դիշերն էստեղ ես ե-
ղել, հէլ չես ասում Շողերն ուր է...»

—Շողերը... Շողերը... Նաւօն ցնցուեց, դողաց
կանգնած տեղում ու աչքերը չուեց սարսափած։

—Երեկ իրիկուանից չը կայ, սև դիշերուան մէջ
կօրաւ բալաս, ախ...»

—Ապրօ, Շողերը, դու տեսա՞ր, չ՞ս տեսել, դարձաւ
Նաւօն դէպի Ապրօն, որ նոյնպէս քարացած մնաց։ Այս
երկու մարդն իրարից անկախ մտածում էին իրանց տե-
սածների մասին, մտածում էին և սարսափում։

Ապրօն լուռ էր. բազմութիւնն սպասում էր։ Նա
յիշում էր, որ հետեւեց այն աղջկան, ուզում էր բռնել,
յետ բերել, կամ իմանալ, թէ ուր է գնում մենակ այն
չար ժամին, բայց աղջիկը կորաւ նրա վրայ լճի ափին,
Ապրօն զուր աշխատեց իմանալ, թէ ինչ եղաւ։ Ապրօն
այն ժամանակ հեռուից կիսախաւարի մէջ նշմարեց
ձկնորսի նաւակը, հասկացաւ նրան սպասնացող ան-
խուսափելի վտանգը և լճի ափերին սպասեց, վազեց
Նաւակի հետ, և գտաւ կիսամեռ նաւօին ու փրկեց։
Միթէ այն աղջիկը Շողերն էր, ուր գնաց, ինչու, Ապ-
րօն ասել չէր կարող և լուսում էր։

—Գոպէ, Շողերը, դարձաւ Նաւօն դէպի ծերունին.
տարիներից յետոյ՝ առաջին անգամն էր, որ նա երես
առ երես խօսք էր ուղղում իր հակառակորդին, վիշտը
ընկնում էր խստասիրտ ձկնորսին։ Շակած Գոպէն աչ-
քերը թարթեց երեխայի պէս, նայեց չորս կողմը՝ ասես
Շողերին վնտրելով, շրթունքները դողդողացին մի վայր-

կեան, ապա նայեց բազմութեանը, նայեց այս յուսակը՝
տուր ծնողներին։ Եւ այդ հայեագքը, նրա ամբողջ գէմւ
քը այդ վայրկենին այնքան խղճալի, այնպէս ողորմելի
էին, որ կարծես ծերունին ներողութիւն էր խնդրում
բազմութիւնից, որ ինքը չի տեսել նողերին, ոչինչ չը
գիտէ, չի կարող այս ցաւին ճար անել։

Կրկին տիրեց մի քար լուսութիւն, որ խանգարում
էր միայն Գիւլնազի հեծկլտանքներով։ Շուարած գլուխ-
ներից վեր կարծէս աներևոյթ կերպով սաւառնում էր
մահը, ամենքն զգում էին նրա շունչը, որի սառնութիւնը
թափանցում էր բոլոր հոգիների խորքը, սառսուցնում
էր մարմինները, անորոշ անհանգատութեան, ցաւի ար-
տայայտութիւն տալիս աչքերին, բայց և այնպէս ոչ ոք
չէր խոստովանում իր միտքը, ոչ մէկը միւսին չէր բաց
անում իր գաղտնի զգացմունքը։ Առանց գաղազի՝ յու-
ղարկաւորներ էին սակայն և լուռ էին։ Եւ այդ լուս-
թիւնը խեղդում էր ամենքին։ Մի խօսք, մի ձայն, մի
նոր կարծիք, մի դէպք գոնէ, որ այս կացութիւնը փո-
խէր, այս էին մտածում ամենքը և սպասում էին՝ իրար
նայելով։ Եւ այդ դէպքը յայտնուեց. ջրաղացը յանկարծ
լոեց, քարը կանդ առաւ, չախչակը պապանձուեց։

—Ի՞նչ պատահեց։

Գսպէն առաջինը նկատեց այդ և կամացուկ գնաց
ջրաղացի յետեր, բայց մի վայրկեան յետոյ գունատուած
յետ եկաւ, Ապրօի թեր քաշեց, երկսով գնացին, մինչ-
դեռ բազմութեան մի մասը դիմում էր դէպի լիճը,
միւս մասը դէպի դաշտերը, իսկ ոմանք էլ չուարած, ինչ
անելները չ'իմանալով կանդնած մնացել էին իրանց
տեղում անշարժ ու մտամոլոր։

—Նայիր, ասաց Գսպէն Ապրօի թեից քաշելով։

—Օ՛, զուլում, զուլում բան է, ճշաց Ապրօն այնպիսի
ձայնով, որ ամենքը վաղեցին դէպի ջրաղացի յետեր և
սասանուած մնացին. Նողերը փուռւած էր ջրերի վրայ
և իր մարմնի լայնութեամբ փակել էր նաւի անցքը,
որից և ջրաղացը կանգ առաւ։ Երկայն, սև մագերի մի

մասը փռուել էր դէմքին, իսկ միւս մասը փաթաթուել պարանոցին, ձեռքերից մէկը կրծքին, միւսը կախ ընկած ջրի մէջ. կանաչ մամուռ, ջրային զանաղան ծաղիկներ, խոտեր կախկախուել էին նրա գդեստներից, հիւսուել էին նրա մաղերին՝ մահուան պսակ կազմելով կուսական գլխի շուրջը։ Սոսկումի մի ճիշ էր, որ թռաւ բոլոր շրթունքներից, երբ նրան գուրս հանեցին ջրից և դրեցին ափին ուռիների տակ։ Գիւլնազը նրա վրայ ընկաւ սրտապատառ աղաղակով, իսկ Նաւօն իր տեղում երերաց, բոլոր հասակով փռուեց գետին. ապա ծունկ չոքեց, ձեռքերը բարձրացրեց և ճշաց.

—Ես եմ խեղդել, ես խեղդեցի աղջկաս, հարեաններ, հայշքրիստոնեաններ, նայեցէք, որան ես եմ խեղդել, էս չորացած ձեռներովս, Ծում խեղդեցի. Երկինք, Աստուած, չես տեսնում, չը տեսամը, հայրն իր սեփական զաւակին խեղդեց. դէ, ճայթիր, զարկ, զարկ էս նզովուած գլխիս, ինչու թողիր, որ ես ազատուեմ։

Բազմութիւնը ոչինչ չէր հասկանում, ոմանք կարծեցին, թէ Նաւօն մօտ է խելագարուելու, ուրիշներն աչքերը սրբելով իրար էին նայում։

—Օօ, սիրուն բալա... Շողեր ջան, խոտ ու ծաղիկ ով ցանեց վրադ... ով այսպէս զարդարեց քեզ... մազերդ ով այսպէս սիրուն փռեց ճակատիդ... հարսանիքի համար է... հարսանիք... թող սաղ աշխարհը պարի, հարեաններ, պարեցէք, գեճնդ բռնեցէք, Շողերիս հարսանիքն է... տեսէք, խոտ ու ծաղկով կանաչ-կարմիր է կապել։

Բազմութիւնը հեկեկում էր. Նաւօն անարցունք ու սարսափելի աչքերով նայեց լացողներին, ապա աղջկայ դիակին, թաւ բեկիսերի տակ շրթունքները դողդողացին, դէմքը ձգձգուեց, ծամածուեց, ու յանկարծ իր ահագին ցաւը կրծքում պարտկելու անկարող՝ նա մռնչաց, վազուց հետէ սրտում կուտուած լուռ վիշտը կարծես քանդեց պատուարը և աչքերից յորդ արցոնքի ձեռվ դուրս թափուեց։ Դա լաց չէր, այլ ուռած կրծքի աւե-

բած և հեկեկանքի փոխարէն իրար յաջորդող անընդհատ աղեխարշ տնքոցներ։ Այդ լռակեաց, մռայլ, խստադէմ ծերունին, օրի արցունքը գեռ ոչ ոք չէր տեսել, իր սըդի, իր ահագին վշտի մէջ սոսկալի էր։ Տարիներ շաշունակ զսպուած ու հպարտ, երբէք թուլասիրտ, վախկոտ ու փոքրոդի, ծեր ձկնորսը մի հինաւուրց կաղնու պէս, որ ընկնում է անօրինակ փոթորկի տակ ահագին շառաչով, այժմ ընկճուած, վշրուած էր. տեսարանը վեհօրէն սոսկալի էր։ Բազմութիւնն այժմ ամեն ինչ մոռացած՝ նայուած էր միայն այս անօրինակ սուգին, և ամենքի հայեացքի մէջ մերձաւորի փակ հոգին բաց տեսնելու սոսկումի հաճոյքն էր փայլում։ Խոկ նաւօն փոռում էր ամենքի առաջ իր տանջուած հոգին, ասես ուխտել էր ցոյց տալ աշխարհին, որ իր մռայլ արտաքինի տակ նոյնպէս ծածկուած կայ մի մարդկային զգայուն սիրտ, որ այժմ իր լացի հետ կարծես մասմաս դուրս էր թափւում։

Նա գալարուում էր աղջկայ դիակի վրայ, երեսը տրորում էր նրա մարմինը ծածկող խոտերի ու մամուռների մէջ, գժի պէս ջղայնօրէն հոտոտում, համբուրուում, կրծոտում էր սկ ու երկայն հիւսերը և կամ ցաւից ու զայրոյթից եղունգներով չանդուում էր գետինը՝ կարծես իր մեռած զաւակի հետ միասին թաղուելու համար։ Բազմութիւնից ոչ ոք չէր համարձակուում մօտենալ, բարձրացնել նաւօին, վերցնել դիակը, շրջան էին կազմել, և սուգը շարունակուում էր։ Յանկարծ յետին շարքերն իրար անցան, փափսացին, կենդանի պատը պատառուեց, բացուեց մի ճանապարհ, և այնտեղ յայտնուեց Գուլէն։ Հանդիսաւոր ու խաղաղ նա առաջացաւ՝ աջ ու ձախ նայելով, մօտեցաւ դիակին, կանդ առաւ նաւօի առաջ, նայեց նրան իր վշտոտ, գթոտ հայեացքով, ապա ծունկ չոքեց, կռացաւ մեռած աղջկայ վրայ, մնաց մի փոքր այնպէս, երբ գլուխը բարձրացրեց, երկու կաթիլ արցունք կախուած էին նրա թերթերունքներից, միայն երկու կաթիլ, աշխարհի համար լացողը մի



գմբաղդի վրայ թափելու այնքան արցունք հազիւ էր պահել:

—Վերցրէք, դարձաւ նա գիւղացիներին: Նաւօն լուս նայում էր, դիակը վերցրին առաջ ընկան, մի երկու հոգի նաւօին բարձրացրին թևերի տակից, և բազմութիւնը շարժուեց: Կամուրջի վրայ վշտից կիսափելաւ դարձանորսը յետ դարձաւ, բոռնցքը բարձրացրեց օդի մէջ դէպի ջրաղացը:

—Անէծքի բուն, վէրան դառնաս, վէրան, ինչպէս իմ կուրծքն է: Ձկնորսի շփոթուած գլխում ջրաղացը, Գուպէն, Ասօն, Շողերի մահն իրար էին խառնուել, իրար հետ կապուել այնպէս, որ էլ նա զատել չէր կարողանում մէկը միւսից, նա սպառնում էր քինոտ ու զարհուրելի: Նա էլ չէր հեկեկում, չէր լալիս, լուռ էր և յանկարծ բարձրաձայն քրքջաց մահասարսուո ծիծաղով, յուղարկաւորների մարմնով սալսուո անցաւ: Ամենքը կանգ առան, յետ նայեցին, իսկ նաւօն շարունակում էր իր քրքիջը և քայլում՝ «վէրան, վէրան» գոչելով:

Գուպէն կանգնած նայում էր հեռացող յուղարկաւորներին, որ եկան, իր ջրաղացից մահը շալակեցին, գընացին, նայում էր ցաւից խելքը կորցրած ծեր ձկնորսին, որի սպանիչ ծիծաղը գեռ հնչում էր դաշտերի մէջ չոր ու անողորմ: և երբ բաւական հեռացան, նստեց իր թմբի վրայ, ծեր զլուխը ձեռքերի մէջ առաւ ու բարձրաձայն հեկեկաց: Արցունքը թափում էր խորշոմած այտերի վրայով, թրջում էր ալեզարդ միրուքը, կուրծքը, և նրա հեծկլտանքները յուսահատ ու խեղճ՝ կորչում էին շրջակայքի ամեյութեան մէջ, որպէս անապատում մոլորուած մի գմբաղդի օդնութեան աղաղակները: Ինքը Գուպէն նոյնպէս մի մոլորուած չէր կեանքի մեծ անապատում, ուր միայն ցաւեր ու սեեր տեսաւ: Ինչու համար այս զարհուրելի զուգադիպութիւնը, ինչու համար նրա երիտասարդութիւնն ու ծերութիւնը այսպէս նմանում, կապւում են իրար երկու մահերով: Եւ ձըկ-

նորսը նրան էր սպառնում, գուցէ և բազմութիւնը նը-
րան էր անիծում: ինչո՞ւ, իր ո՞ր յանցանքի համար:

— Ներիր, Տէր, մրմնջում էին նրա շրթունքները,
ինայիր այս իմ ալիքներին, իմ ծեր օրերին, թող որ
գոնէ այսուհետեւ թեթև խղճով ազքելոս փակեմ, որ
դոնէ գերեզմանի մէջ հանգիստ գտնեմ: Թէ յանցաւոր,
մեղաւոր եմ, այսքանն էլ բաւական չէր Քո ողորմու-
թեանն արժանանալու, չէ Դու գթած, երկայնամիտ,
ողորմած ես: Մենակ եմ, Տէր, Դու այդպէս կամեցար,
Քեզնից բացի ոչ ոք չունիմ: իմ անուերութիւնը, իմ ծե-
րութիւնը ինայիր: Եւ մեղաւոր ու վշտացած ծերունին
աղօթում էր երկար-երկար, և արցունքը թափուում էր
անընդհատ, սիրտը թեթևանում էր: Ապա նա յիշեց
Առօին, նրա առաջին խոստովանութիւնը, իր տուած
խորհուրդը... «Ա նաւօն ինձ էր անիծում», մտածեց նա,
և շրթունքները ցաւոտ ժպիտ ձևացրին: «Ասօ, Ասօ,
այս ինչ արիր», մրմնջաց ծերունին, կասես նա իր ա-
ռաջը կանգնած լինէր: Ո՞ւր էր Ասօն, ծերունին այդ
յը դիտէր:

— Տէր, Դու ինայիր նրան, ամենքին, ազատիր
զուլումից, ցաւից, Տէր:

XIX

Լիճը եզերող լեռների կատարները կամաց-կամաց
ծածկում էին ձիւնով, և վրանաբնակ թափառականնե-
րըն իրանց հօտերով ցած էին գալիս դէպի հարթավայ-
րերը: Նրանց հետ միասին ցասումը մօտենում էր, շէն
դիւզերը կծկում ու դողում էին: Ինչպէս Սինակայ
սարերի կրծքերից դէպի լիճը գլուխուղ փակներն ու
աղբիւրներն իրանց մօր ճակատը կնճում էին, այնպէս
էլ շրջակայքից հասնող լուրերը սև ագռաւների երամ-
ների պէս ծանրանում էին դիւզերի վրայ և խորշունե-
րով պատում անհոգ դէմքերը: Ոչ ոք չէր կարող ասել,
թէ ինչ, բայց ամենքը, համոզուած էին, որ մի բան է

մօտենում հանդարտ, բայց հաստատ, անողորմ քայլերով։

Մէկ նաւօն էր անհոգ, մէկ նրա փոյթը չէր։ Աղջը՝ կայ այնքան եղերական մահից յետոյ նա իսպառ լոեց, անդամ կինը այլևս նրա ձայնը չէր լսում։ Հին նաւակի տեղ նորը ձեռք բերեց, հին առագաստի տեղ նորը պատրաստեց և առաջուայ պէս ամեն օր գնում էր լիճը վաղ առաւօտից, երբ գեռ գիւղի փողոցներում մութ էր, և նրան ոչ ոք տեսնել չէր կարող, նստում էր նաւակի մէջ և բաց անում առագաստը։ Ոչ ոք չը գիտէր, թէ նա երբ է յայտնուում լճի վրայ և երբ վերադառնում։ Ակզբում կարծում էին, թէ նաւօն վերսկսել է իր պարապմունքը, որ նա կամաց կամաց մոռանում է աղջկայ մահը, բայց յետոյ պարզուեց ուրիշ բան։ Նաւօն այն մարդկանցից մէկն էր, որոնք ապրում են միայն ներսից, ծածուկ և խորապէս, այն հոգիներից մէկը, որոնք նման են հրաբղսոտ լերան, որ սակայն երբէք չի ժայթքում, եռում է խորքերում, պատառոսում, աւերում սեփական կուրծքը, առանց որ արտաքուստ այդ ներքին երկունքի, աւերածի նշաններն երևային։ Բայց հասնում է ճգնաժամը, այլևս անկարելի է դառնում զսպել ներքին տադնապը, այն ժամանակ ժայթքումը զարհուրելի է, աւերածը անուղղելի։ Մի այդպիսի, հրաբղսային ճգնաժամ ապրեց նաւօն, նրա հոգու, սրտի աւերածը այլևս անդարձանելի էր։ Աէր, քէն ու վիշտ նաւօն ըղգում էր հաւասարապէս խոր, հաւասարապէս ուժգին։ Այժմ առաջինն այլս չը կար, աղջկայ մահը ջնջեց այն և նրա փոխարէն էլ աւելի զօրացրեց ցաւն ու քէնը նրա փշուած սիրալ լուռ մխում էր այդ ցաւից, ինչպէս մեծ հրդեհից յետոյ ծխացող աւերակները, և հոգին ամբողջապէս բռնուած էր վրէժի, ոխի զդացմունքով, գլխում մնացել էր մի հատիկ միտք, — ուրիշներին արցունք ու կսկիծ պատճառելու միտքը։ Նա չէր խօսում ոչ ոքի հետ, որովհետեւ ատում էր ամենքին, չէր երկում ոչ մի տեղ, որովհետեւ իր վայրենի միայնու-

թեան մէջ ոչինչ չէր խանգարում իր էռոթեան ոչնչացումը, որ նրան հաճոյք էր պատճառում, Մեծ ցաւի ծանրութիւնը նրան գէպի ինքնասպանութիւն չը մղեց, նա շարունակում էր ապրել և իր անպէտքացած դոյութիւնը մաս-մաս ջնջել և կարծես ինքը ճաշակում էր այս գանգաղ ինքնասպանութեան, սեփական աւերածի սոսկալի քաղցրութիւնը: Նա ատում էր ասես մինչև իսկ ինքն իրան:

Դեռ երբէք նաւօի նաւակն այնքան գեղեցիկ և նրա առագաստն այնքան սպիտակ, այնպէս գըրախչ չէր, ինչպէս այն աշունը: Մենակ իր նաւակի վրայ, մենակ լճի վրայ, երկնքի և երկրի մէջ կախուած, այդ անօրինակ ձկնորսը տարւում էր կապօյտ ջրերի վրայով կատաղի արագութեամբ, գէպի ուր նրան տանում էին աշնանային հովերը: Լիճը խաղաղ էր, թէ ալեկոծ, ալիքներն ուռած էին, թէ գեղածիծաղ, այդ նաւօի համար միենոյն էր, նրա առագաստը միշտ բաց էր, նրա նաւակը միշտ ոլանում էր գէպի որևէ կողմէ: Իր խելագար լնթացքի մէջ նա երբեմն-երբեմն բարձրացնում էր իր թին և ահագին թափով զարկում էր ալիքներին, երբ որևէ մեծ ձուկ կամ ջրային այլ կենդանի էր յայտնուում ջրերի մակերեսոյթին: Եւ երբ զոհի դիակը փռւում էր ալիքների վրայ, նա նայում էր վայրենի հաճոյքով և քրքջում էր իր չոր, սարսափելի ծիծաղով: Երբ ուժեղ հողմերի առաջ լիճը փոթորկւում էր, երբ ալիքները լեռնանում, փրփրում էին, գիւղացիք հեռուից սարսափով էին նայում ծեր ձկնորսին՝ ամեն վայրկեան սպասելով, թէ նա կուլ կ'երթայ անգունգներին, բայց ահաւոր վտանգը, մեծ վիշտը կարծես կրկնապատկել էին ձկնորսի բազուկների ոյժը: Նա անհոգ կերպով խաղում էր կատաղի ալիքների հետ, և նաւակը տարւում էր այս ու այն կողմ տաշեղի պէս, մերթ յայտնուում, մերթ ծածկում փրփուրէ բլրակների մէջ: Կարելի էր կարծել, թէ նաւօն մահ է փնտրում,

բայց մահը վախենում է նրանից, վախչում է հեռն, հեռնւ:

Ամեն անգամ երբ դիպուածով կամ գուցէ տիրոջ ցանկութեամբ այդ մենաւոր նաւակը համում էր այնամեղ, ուր հայրը այն սարսափելի դիշերը իր բազուկներով յետ մղեց գուցէ փրկութիւն վնարող իր աղջկան, երբ նրա խախտուած երեակայութիւնը էլի մի յետին թափով պատկերացնում էր այն անողորմ պայքարը մի հօր ու խեղդուող աղջկայ մէջ, նաւոն կանդ էր առնում, կախում էր նաւակից գուրս, նայում էր ջրերին երկար-երկար և ապա յանկարծ քրքջում էր խելագարի անմիտ ծիծաղով։ Յետոյ նաւակը շարժւում էր, առագաստը ուռչում էր, և նա գնում էր գէպի հակառակ կողմը նոյնպէս արագ, կրկին կատաղի թափով։ Լայնարձակ լճի վրայ, բիւրաւոր ալիքների խորշերի մէջ կարծես թէ նա աեղ էր վնարում իր ցաւը մաս-մաս թաղելու և գտնել չէր կարողանում։

Գիւղացիք վերջ ի վերջոյ հասկացան, որ նաւոն այլես ձուկ չի որում, որ նա միայն խելագարի պէս թափառում է լճի վրայ։ Եւ երբ հեռուից նշմարում էին այն սպիտակ առագաստը, այն սիրուն նաւը, էլ սիրով չէին նայում, այլ մի ներքին ցաւով ու սոսկումով։ զարմանալի ձկնորսը իր վարմունքով ճնշում էր ամենքին, թւում էր, թէ ինքը մահն է խաղում լճի վրայ սե ծըրագրներով։ Այդ ճնշող զգացմունքն այնպէս էր զօրանում օրաւուր, որ եթէ մի փոթորկոտ օր նաւոն իր նաւակով, առագաստով կուլ գնար ալիքներին, էլ ոչ ոք չէր ցաւի, որովհետեւ այսպիսով գիւղը կ'ազատուէր այդ շարագուշակ երեսյթից, և ձկնորսի ցաւն էլ վերջ կ'առնէր։ Բայց փրկիչ փոթորիկը չը կար. խորհրդաւոր գարձած նաւակը լողում էր լճի վրայ, և ձկնորսի քրքիջը հնչում էր ալիքների շառաչի հետ։

Գիւղի ցաւը սակայն միայն նաւոն չէր։ Երջակայքից «բըսագ-բըսագ»-ը սաստկամում էր, և դրա հետ միաժամանակ չորս կողմից հրդեհները բազմացան։ Նախ

գիւղի երեք ծայրում մի մութ գիշեր միաժամանակ երեք գէղ բռնկուեցին բոցերով, մարել անկարելի եղաւ, և երեք ընտանիք յաջորդ օրը նստեցին մոխիրների վրայ: Յետոյ սկսեցին վառել մարագները գիւղից դուրս: Համարեա իւրաքանչիւր գիշեր չարագուշակ բոցերի արիւնագոյն փայլը լուսաւորում էր գիւղի խրճիթները, և անզօր, ոզորմելի բնակիչները կանանց ու երեխանների լացի ուղեկցութեամբ վաղվզում էին այս ու այն կողմ, գլուխները կորցրած, չիմանալով ինչ անել: Միենոյն ժամանակ գիւղից վեր բլրի կրծքին հնչում էր միշտ ձըկնորսի գիւղին ծիծաղը, որ խառնուում էր բոցերի մոնւլցի հետ: Կասկած չը կար, հրդեհը ձգում էին գիւղի թշնամիները, լեռնաբնակ թափառականները, որոնք ուխտել էին երեկի այսպիսով վրէժ լուծել ուխտաւորների կատարած այն մի հատ սպանութեան համար: Ցերեկները լծի վրայ սլացող այն մենաւոր նաւակը, գիշերներն իրար յաջորդող հրդեհները, բլրի վրայից հնչող անողորմ քրքիջը, հեռուից համուզ «բըսագի» ձայները յուսահատութեան էին հասցնում գիւղացիներին: Այս բոլորի հանդէպ ճարը ցասման ժամն էր, ասում էր վարդապետը իւչ Քիլիսէից, ցասման ժամ, կրկնում էր կոյս-Գուլէն և նրա հետ տիրացու գրբացը: Ա. Խաչի պասն էր և մեռելոցի օրուայ համար պատրաստութիւնները տեսնուում էին շտապշտապ: Յոլոր թոնիրները հաց էին թխում, կոյս-Գուլէն պատրաստում էր նշխարները Գոպէի բերած շարմազ ալիւրով:

Եւ սակայն ով էր այս ցասումի պատճառը, ինչու համար օր-աւուր աճող այս ցաւերը, որոնք սպանում էին խեղգել գիւղը, ով բերեց այս զուլումը: Մարդիկ մտածում էին, մարդիկ փնտրում էին յանցաւորին և գըտան վերջապէս շնորհիւ իմաստուն գրբաց-տիրացուի:

Ապրօն, այդ պատանով շրջող զուլում ծշացող մարդը:

Ոտքը բէխեր է, նրա եկած օրից ամեն բան փոխուեց: Գիւղի հանգերում արիւն թափուեց, նողերն

իրան լիճը նետեց, նրա հայրը խելագար թափառում է, հրդեհները բռնել են գիւղը, մի աներեսյթ ձեռք բոց ու արիւն է սփռում չորս կողմում, «բըսագի» ձայնից որոներն են գողում:

Ապրօն, հա, Ապրօն, նա է բոլորի պատճառը, զուլում է ճշում մութ գիշերներին, այդ գեռ քիչ է, գեռ ծաղրում է ցաման ժամը, չի հաւատում որբերին, հեղնում է Մրրկի խաչքարը: Ապրօն թնդ գնայ, հեռանայ գիւղից, թուղ ուրիշ տեղ կանչի զուլում, նրա ոտքը չար է, դժբաղդութիւնն իր հետ ման է ածում: Այսպէս մտածեցին գիւղացիք, և մի օր Ապրօն կանչուեց հրասպարակ: Տիրացուն բազմել էր կենարոնում, աջ ու ձախ գիւղի միւս իշխանները:

—Ապրօն, հեռացիր մեր գիւղից, ասաց տիրացուն՝ առանց գլուխը բարձրացնելու:

—Հեռանամի:

—Հա, հա, հեռացիր, ոտքդ չար է, բէխեր, քո գաւլուց յետոյ մենք ել դադար, հանդիստ չ'ունենք:

—Հեռացիր, հեռացիր, կանչեցին միւսները:

Ապրօն լուռ էր:

—Ես խօսում եմ աւետարանից, սուրբ գրքից, մարգարէների, առաքեալների բերանից, քանի Յովսան մարգարէն նաւի վրայ է, փոթորիկը չի անցնի, հեռացիր:

—Յասման ժամին գու չես հաւատում, մենք ցառման ժամ ունինք, գու այստեղ չը պէտք է լինիս, շարունակեց տիրացուն:

—Յասման ժամը մեղ կը փրկի, հեռացիր:

Ապրօն գլուխը բարձրացրեց, նայեց իրան շրջապատառներին, կտաւն զգուշութեամբ ցած բերեց ուսից, փուեց առաջը:

—Նայեցէք, ասաց նա, գուք գողում էք սրանից, իսկ ես ման եմ ածում ինձ հետ, որովհետեւ մահից չեմ վախենում: Ես կ'երթամ, որ ձեր ցասման ժամը զօրա-

ւոր լինի... Եւ նա կտաւը կրկին ձգեց ուսին ու շարշառեց:

—Գնա, գնա:

—Զուլում, զուլում, վերջին անդամ կանչեց Ապրօն հեռանալիս, և այդ ձայնը որպէս մահուան, տեսրածի մի ճիչ, տարտծուեց գիւղի վրայ ու մեռաւ իրճիթների կտուրներին:

Եւ Ապրօն գնում էր մենակ, գլխակոր ու ջարշգուած: Գնում էր ու մտածում: Այս երկարորդ անդամն էր, որ նա այսպէս ճնշուած սրտով հեռանում էր հայրինի գիւղից, մէկ երիտասարդութեան ժամանակ, մէկ էլ այժմ, այս ծեր օրերին: Առաջին անդամ նա թողեց իր յարին ու իր օջաղը, յուսալով այսպիսով աղատել իր կնոջը՝ Գիւղիզարին, երազած երջանկութիւնը չը գտնելով ամուսնութեան մէջ՝ փախաւ, որ գոնէ մի ուրիշը— իր կինը կարողանայ երջանիկ լինել, նա ուզեց ջնջուել ուրիշին տեղ անելու համար: Այժմ ինքը կամաւ չի դընում, նրան քշում են, բայց գարձեալ ուրիշի երջանկութեան համար, գիւղը կարծում է, թէ առանց Ապրօն նա երջանիկ կը լինի: «Թո՞ղ լինի, թո՞ղ լինի», մրմիջում էր նա և քայլում շարունակ: Քանի տարի էր նա այսպէս քայլում գիւղից-գիւղ, քաղաքից-քաղաք, լեռնից-լեռ, ձորից-ձոր: Նրա գլխին ծանրացած անէծքը ասես էլ վերջ առնելու չէր: Նա այնքան բան էր տեսել իր սե, թափառական կեանքի ընթացքում, այնքան ուխտաւորներ տարել-բերել սուրբ Կարապետ, այնքան դժբաղդների, թշուառների գանգատաները լսել: Ապրօն բաց աչքերով էր տեսել մեծ ցաւը, զուլումը, ճաշակել էր նրա բոլոր դառնութիւնը և իբրև կեանքի վերջին հարկ, վերջին պարտականութիւն, նա եկել էր հայրենի գիւղին իր գիտեցածն ասելու, եկել էր քնած, անհոգ հոգիներին զարթեցնելու պատրաստուող մեծ ցասումի հանդէպ, որից ժամ ու պատրաստով աղատուել անկարելի էր, եկել էր նաև իր ծեր օրերին տառապած գլուխը հայրենի գիւղում թաղելու: Բայց իր ծննդա-

վայրը նրան մերժեց, մի մարդ, մի տանջուած, անհանգիստ հոգի միայն հասկացաւ նրա առած զուլումը և գնաց... նա Ասօն էր։ Ամբողջ գիւղում միայն Ապրօն գիտէր, թէ ուր է Ասօն, միայն նա էր, որ չէր անիծում անհետ կրած երիտասարդին Շողերի մահուան համար։ Ասօից յետոյ Ապրօի սրտում տեղ էր բռնել նաև մի ուրիշը, այն ծեր, պատկառելի ջրաղացպանը՝ Դսպէն։ Ասօն կապում էր այդ երկու ծերերին իր անհնաւորութեամբ, նա օգակ էր նրանց հողիների մէջ։ Ապրօն սիրում էր այն ջրաղացը գիւղից դուրս, սիրում էր ուռիւների երկու շարքը, սիրում էր մանաւանդ այն մենաւոր բարձրահասակ ծերունուն, որ ժայռի պէս կանգնած էր կեանքի ճախորդութիւնների հանդէպ։ Նրա համար Գլուպէն մի իմաստուն էր, որ գիտէր, հասկանում էր ամեն բան, որ ամենքի համար մի բարի խորհուրդ ունէր և որ սակայն իր գիտացած, տեսած զուլումի գէմ անզօր էր։

Ապրօն յիշեց նաև Գուլէն, և սիրաը ցաւով լցուեց։ Նա չը կարողացու տեսնել նրան, խօսել հետը և նրանից թողութիւն խնդրել։ Մի քանի անգամ եկեղեցում տեսաւ, սպասեց մինչեւ ժամասացութեան վերջը, բայց երբ մնաց բոլորսվին մենակ, քաջութիւն չունեցաւ մօտենալ այդ սեազգեստ կնոջը, որ էլ ոչնչով նման չէր իր թողած Գիւղիզարին։ Եւ սակայն այդ ուեր, կեանքի անվերջ սուրբ իր՝ Ապրօի գործն էր, իր պատճառով էր եղած։ Մի քանի անդամ մտածեց գնալ, նրա փոքրիկ խուցի գոնակը թակել գիշեր ժամանակ և միայն երկու բառ սասել՝ «ներիր, Դիլիզար», բայց երբ մօտենում էր այդ նուրիտական տնակին, երբ տեսնում էր հեռուից նրա պլպլացող ճրագի լոյսը, յետ էր փախչում վախեցած, սպասելով՝ որ մի առիթ ներկայանայ։ Եւ առիթը ներկայացաւ այժմ։

Գուլէն գալիս էր հէնց Ապրօի հանդէպ։ Երբ հեռուից նա նկատեց սդաւոր կնոջը, սիրտն ոկտեց բարախել, կանդ առաւ մի վայրկեան, բայց ոյժ գործ դրեց

ու քայլեց։ Նրանք կանգնած էին դէմ յանդիման։ Լուս
էին։ Առաջինը խօսեց Գուլէն։

— Լաւ չ'արիր, Ապլօ, լաւ չ'արիր, մենք կապուած
էինք Աստծու առաջ։

— Հա, ես էլ գիտեմ, որ լաւ չ'արի, բայց ուշ ի-
մացայ, ներիր։

— Օ՛, ներողութիւն խնդրելու դու կարիք էլ չու-
նես, երեի այս էլ ճակատագիր էր. մեր ճանապարհնե-
րը տարբեր էին, ինչպէս և այս ժամին, երբ ես գալիս
եմ իւշ-Քիլիսէի վանքից, իսկ դու դնում ես՝ ով գի-
տէ՞ ուր։

— Ճանապարհներս տարբեր, նպատակներս մէկ ե-
զաւ, Գուլէ, չէ ես էլ ուխտաւորների վալադ էի, ինչ-
պէս դու սդաւորների։

— Հա, հա, իրաւոնք ունիս, մենք իրար պարտ
չենք, դու էլ իմ պատճառով չորեն ընկար, իմ զն,
տանջուած մարդ։ Վշտոտ կնոջ աչքերը թացացան, այ-
տերի վրայ քաշ ընկան արցունքի կաթիներ։ Ապրօն էլ
հեկեկաց, մօտեցաւ, և տարիներից յետոյ առաջին ան-
դամ նրանք համբուրուեցին քոյլ ու եղբօր պէս ամայի
դաշտում, երբ աշնանային հովը խաղում էր չոր տերեւ-
ների հետ, շփում, հաւաքում էր իրար վրայ, ապա ցաք
ու ցրիւ փռում դաշտերում, ձորերում, որպէս մեռած
յոյզեր, անցած երազներ։

— Մնաս բարի՛, Գուլէ։

— Էլի մւր։

— Նայիր այն տերեներին, որ քամին տանում է
մերթ մեծ ճանապարհների վրայով, մերթ երկնքի երե-
սից. Նրանք երեկք ասել կարող են, թէ ուր են գնում։
Ես էլ մի չորացած տերեւ եմ, իսկ իմ ճակատագիրը մի
աշնանային հողմ, որ մերթ վշտում է կատաղաբար, մերթ
թողնում է, որ մի քարի, մի թմբի, մի ծառի յենուեմ,
հանգիստ առնեմ։ Գիւղն ինձ հալածեց, Գուլէ, ասում
են, որ իմ ոտքը բէխեր է... իրաւոնք ունին, ես էլ այդ
գիտեմ և փախչում եմ հեռու, հեռու, որ զուլումից ա-

զատ մնան անմեղները. մնաս բարի՛, մեր ճանապարհուները տարբեր են:

—Գնաս բարի՛:

Եւ նրանք գնացին զանազան կողմեր, մէկը դէպի գիւղ՝ ցաման ժամի վերջին նշխարները թխելու, իսկ միւսը դէպի մուլթ անյայտը:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Կը շաբունակուի)